18/M01	Մասնագիտական օտար լեզու/անգլերեն 1	0	12/0/0	I	Մտուգարք
18/M01	Մասնագիտական օտար լեզու/անգլերեն 2	0	12/0/0	II	Մտուգարք
18/H04	Մասնագիտական օտար լեզու/ռուսերեն 1	0	12/0/0	I	Մտուգարք
18/H04	Մասնագիտական օտար լեզու/ռուսերեն 2	0	12/0/0	II	Մտուգարք

4. Ֆինանսներ

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
18/H01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն-1	0	12/0/0/	I	Մտուգարք
18/H02	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն-2	0	12/0/0/	II	Մտուգարք

1.«Կառավարում»

2.1.2. Ընդհանուր դասընթացներ

Ընդհանուր կրթամասի աշխատաձևավարը 8 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ «Տեղեկատվական մենեջմենթ» և «Ռիսկերի կառավարում»: Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր դասընթացներին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

Թվանիշ	Սոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանայի ն ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
05/H01	Տեղեկատվական մենեջմենթ	4	0/12/0	I	Քննություն
20/H24	Ռիսկերի կառավարում	4	12/0/0	I	Քննություն

2.«Բիզնեսի կառավարում»

2.1.2. Ընդհանուր դասընթացներ

Ընդհանուր կրթամասի աշխատածավալը 7 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումն ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ «Տեղեկատվական մենեջմենթ» և «ՀՀ գործարարական իրավունք»: Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր դասընթացներին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

Թվանիշ	Սոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանայի ն ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
05/H01	Տեղեկատվական մենեջմենթ	4	18/0/0	I	Քննություն
06/H19	ՀՀ գործարարական իրավունք	3	12/0/0	I	Քննություն

3.«Տուրիզմի կառավարում»

2.1.2. Ընդհանուր դասընթացներ

Ընդհանուր կրթամասի աշխատածավալը 8 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումն ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ «Համակարգչագիտություն» և «Արդյունավետ կառավարում»: Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր դասընթացներին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
05/H08	Համակարգչագիտություն	4	12/0/0	I	Քննություն
20/H37	Արդյունավետ կառավարում	4	12/0/0	I	Քննություն

4. «Ֆինանսներ»

2.1.2. Ընդհանուր դասընթացներ

Ընդհանուր կրթամասի աշխատածավալը 8 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումն ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում» և «Մասնագիտության փիլիսոփայական հարցեր» Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր դասընթացներին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
05/H01	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում	4	12/0/0	I	Քննություն
16/H01	Մասնագիտության փիլիսոփայական հարցեր	4	12/0/0	I	Քննություն

1.«Կառավարում»

2.1.3. Մասնագիտական պարտադիր դասընթացներ

Մասնագիտական պարտադիր կրթամասը կարող է ընդգրկել 8-ից մինչև 16՝ երեքից վեց կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթաց: Կրթամասի ընդհանուր աշխատածավալը ծրագրում սահմանված է 55 կրեդիտ: Մա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Թվանիշ	Սոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանայի ն ժամ (դ/գ/վ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
15/H01	Արժույթային համակարգեր և հարաբերություններ	4	18/0/0	I	Քննություն
15/H03	Տնտեսության պետական կարգավորում	4	12/0/0	II	Քննություն
20/H01	Կառավարման տեսության արդի հիմնախնդիրներ	5	18/0/0	I	Քննություն
20/H02	Բանկային մենեջմենթ	4	18/0/0	III	Քննություն
20/H03	Գործառնական կառավարում	3	12/0/0	III	Քննություն
20/H05	Վարչական կառավարում	4	12/0/0	II	Քննություն
20/H07	Արտադրական մենեջմենթ	4	12/0/0	IV	Քննություն
20/H08	Հանրային կառավարում	3	12/0/0	IV	Քննություն
20/H12	Ճգնաժամային կառավարում	4	12/0/0	III	Քննություն
20/H14	Մարքեթինգի կառավարում	4	12/0/0	IV	Քննություն
20/H28	Ֆինանսական մենեջմենթ	4	18/0/0	III	Քննություն
20/H33	Ռազմավարական կառավարում	4	12/0/0	II	Քննություն
20/H58	Կառավարման հոգեբանություն	4	12/0/0	II	Քննություն
20/H61	Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնասինթոզներ	4	12/0/0	II	Քննություն

1. «Բիզնեսի կառավարում»

2.1.3 Մասնագիտական պարտադիր դասընթացներ

Մասնագիտական պարտադիր կրթամասը կարող է ընդգրկել 8-ից մինչև 16՝ երեքից վեց կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթաց: Կրթամասի ընդհանուր աշխատաժամային ծրագրում սահմանված է 56 կրեդիտ: Մասնագիտորոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Թվանիշ	Սոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/վ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
15/H01	Արժույթային համակարգեր և հարաբերություններ	4	12/0/0	IV	Քննություն
15/H05	Արժեթղթերի շուկա և բորսային գործ	3	12/0/0	III	Քննություն
20/H01	Կառավարման տեսության արդի հիմնախնդիրներ	4	12/0/0	I	Քննություն

20/H11	Կորպորատիվ կառավարում	4	12/0/0	II	Քննություն
20/H14	Մարքեթինգի կառավարում	4	12/0/0	I	Քննություն
20/H15	Մարդկային ռեսուրսների	4	12/0/0	I	Քննություն
20/H16	Էլեկտրոնային բիզնես	5	18/0/0	II	Քննություն
20/H18	Բիզնես էթիկետ և միջմշակութային հաղորդակցություն	3	12/0/0	III	Քննություն
20/H21	Նորարարությունների	4	12/0/0	III	Քննություն
20/H27	Բրենդ մենեջմենթ	5	18/0/0	IV	Քննություն
20/H31	Աուդիտ և ներքին	5	18/0/0	IV	Քննություն
20/H59	Լոգիստիկ համակարգերի	3	12/0/0	III	Քննություն
20/H60	Ճյուղային տնտեսության արդի հիմնախնդիրներ	5	18/0/0	II	Քննություն
20/H62	Աշխարհատնտեսական տնտեսագիտություն	3	12/0/0	IV	Քննություն

2. «Տուրիզմի կառավարում»

2.1.3 Մասնագիտական պարտադիր դասընթացներ

Մասնագիտական պարտադիր կրթամասը կարող է ընդգրկել 8-ից մինչև 16՝ երեքից վեց կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթաց: Կրթամասի ընդհանուր աշխատաժամային ծրագրում սահմանված է 55 կրեդիտ: Մա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ	Կիսամյակ	Գնահատ-
20/H38	Զբոսաշրջության հիմունքներ	4	12/0/0	I	Քննություն
20/H39	Վճարահաշվարկային համակարգեր	4	12/0/0	IV	Քննություն
20/H40	Զբոսաշրջության ռեսուրսներ	4	12/0/0	I	Քննություն
20/H41	Տուրօպերատորի գործունեության կազմակերպում	4	12/0/0	I	Քննություն
20/H43	Հասարակական սննդի կառավարում	4	12/0/0	III	Քննություն
20/H44	Զբոսաշրջության անվտանգության կազմակերպում	4	12/0/0	III	Քննություն
20/H45	Մարքեթինգային տեղեկատվական համակարգեր	4	12/0/0	III	Քննություն
20/H46	Զբոսաշրջության ապահովագրություն և	4	12/0/0	II	Քննություն
20/H48	Հյուրանոցային տնտեսություն և սպասարկում	4	12/0/0	IV	Քննություն
20/H49	Զբոսաշրջության ձևականություններ	3	12/0/0	IV	Քննություն
20/H50	Ներքին զբոսաշրջություն	4	12/0/0	II	Քննություն
20/H51	Գովազդի միջազգային	3	12/0/0	III	Քննություն

20/H56	Միջազգային տուրիզմի	4	12/0/0	IV	Քննություն
20/H57	Էլեկտրոնային տուրիզմ	5	12/0/0	II	Քննություն

3. Ֆինանսներ

2.1.3 Մասնագիտական պարտադիր դասընթացներ

Մասնագիտական պարտադիր կրթամասը կարող է ընդգրկել 8-ից մինչև 16՝ երեքից վեց կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթաց: Կրթամասի ընդհանուր աշխատաժամային ծրագրում սահմանված է 54 կրեդիտ: Մա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Գիսամյակ	Գնահատման ձևը
15/H01	Արժույթային համակարգեր	5	18/0/0	I	Քննություն
15/H02	Էկոնոմետրիկա	3	12/0/0	IV	Քննություն
15/H04	Միջազգային ֆինանսներ	3	12/0/0	IV	Քննություն
15/H05	Արժեթղթերի շուկա և բորսային	5	18/0/0	I	Քննություն
15/H07	Ֆինանսական վերլուծություն	5	18/0/0	II	Քննություն
15/H08	Ներդրումներ և ներդրումային քաղաքականություն	4	12/0/0	II	Քննություն
15/H09	Պետական բյուջե և հարկաբյուջետային քաղաքականություն	5	18/0/0	III	Քննություն
15/H10	Միկրոտնտեսական համալիր վերլուծություն	3	12/0/0	III	Քննություն
15/H11	Ֆինանսական վերահսկողություն և աուդիտ	3	12/0/0	IV	Քննություն
15/H12	Արժեթղթերի պորտֆելի օպտիմալ կառավարում	3	12/0/0	IV	Քննություն
15/H32	Ֆինանսական գործընթացների մաթեմատիկական մոդելավորում	3	12/0/0	III	Քննություն
20/H02	Բանկային մենեջմենթ	5	18/0/0	II	Քննություն
15/H28	Ֆինանսական մենեջմենթ	4	18/0/0	III	Քննություն
20/H29	Բանկային ռիսկերի	3	12/0/0	IV	Քննություն

1«Կառավարում»

2.1.4. Կամրնտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաձևավալը ծրագրում սահմանափակված է 9 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջոցիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2÷4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաձևավալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի: Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/վ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
15/H02	Էկոնոմետրիկա	3	12/0/0	II	Քննություն
15/H06	Տնտեսական գործունեության վեոուծություն			II	Քննություն
15/H18	Ապահովագրական գործ	3	12/0/0	III	Քննություն
20/H26	Նորամուծությունների և ներդրումների կառավարում			III	Քննություն
20/H04	Անձնակազմի կառավարում	3	12/0/0	IV	Քննություն
20/H11	Կորպորատիվ կառավարում			IV	Քննություն

1. «Բիզնեսի կառավարում»

2.1.4. Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաձևավալը ծրագրում սահմանափակված է 9 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջոցիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական

ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2÷4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաժամվալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
15/H26	Մրցակցային միջավայրի կարգավորման	3	12/0/0	II	Քննություն
20/H17	Միջազգային բիզնեսի կառավարում			II	Քննություն
20/H13	Որակի կառավարում	3	12/0/0	III	Քննություն
20/H34	Ռազմավարական կառավարման արդի հիմնախնդիրներ			III	Քննություն
20/H19	Նախագծի կառավարում	3	12/0/0	IV	Քննություն
20/H20	Բիզնեսի գնահատում			IV	Քննություն

2. «Տուրիզմի կառավարում»

2.1.4. Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաժամվալը ծրագրում սահմանափակված է 9 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջոցի սցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2÷4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաժամվալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ

մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
20/H36	Էթնոհոգեբանություն	3	12/0/0	III	Քննություն
20/H54	Սպասարկման կազմակերպում			III	Քննություն
20/H52	Համաշխարհային մշակույթ	3	12/0/0	II	Քննություն
20/H53	Էքսկուրսիոն գործունեության կազմակերպում			II	Քննություն
20/H47	Տրանսպորտային սպասարկում	3	12/0/0	IV	Քննություն
20/H55	Զբոսաշրջության էթիկա			IV	Քննություն

3. «Ֆինանսներ»

2.1.4. Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատաձևավալը ծրագրում սահմանափակված է 9 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջոցի սցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2÷4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաձևավալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
20/H06	Տնտեսական գործունեության վերլուծություն	3	12/0/0	II	Քննություն

20/H13	Պետական և մունիցիպալ ֆինանսներ			II	Քննություն
20/H15	Սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսում և պլանավորում	3	12/0/0 12/0/0	III	Քննություն
20/H16	Ոչ բանկային ֆինանսական ինդուստրիա			III	Քննություն
20/H18	Ապահովագրական գործ	3	12/0/0	IV	Քննություն
20/H60	Վճարահաշվարկային համակարգեր			IV	Քննություն

2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա և մագիստրոսական թեզ:**

Գիտական սեմինարը ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն և այլն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի անցկացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ: Կազմակերպվում է ուսումնառության բոլոր 5 կիսամյակներում, որոնցից յուրաքանչյուրում հատկացվում է 3 կրեդիտ:

Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն ևս կազմակերպվում է ուսումնառության բոլոր կիսամյակներում, որոնցից յուրաքանչյուրում կազմում է 3 կրեդիտ աշխատածավալ:

Գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է 5-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատածավալ:

Գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 5-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված

ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատածավայ:

Մագիստրոսական թեզի կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 5-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատածավայ:

Մաս II.

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Պասընթացների տեղեկագիրքը նախատեսված է «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնում հեռակա ուսուցմամբ իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհիվ ողորկումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ամփոփիչ ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, , ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

«Կառավարում»

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ.

05/H01. Տեղեկատվական մենեջմենթ (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել տեղեկատվական կառավարումը /ՏԿ/ և տեղեկատվական տեխնոլոգիաները /ՏՏ/ որպես կազմակերպության ղեկավարման կարևորագույն բաղկացուցիչ մաս և կազմակերպության գործունեության ձևափոխման հզոր գործիք՝ ժամանակակից բիզնեսի պահանջներին համապատասխան:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** տեղեկատվական մենեջմենթի զարգացման պատմությունը, տեղեկատվական համակարգերի արդյունավետության գնահատման մեթոդները,

2. **Կհասկանա** ինտերնետում գործարարական կառույցների միջև հաղորդակցման ձևերը, էլեկտրոնային բիզնեսի քանակական և որակական հատկությունները,

3. **Կկարողանա** ընտրել բիզնեսին համապատասխան տեղեկատվական մոդելը, վերլուծել բիզնես-գործընթացները օգտագործելով ժամանակակից էլեկտրոնային գործիքները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տեղեկատվական կառավարման հիմնախնդիրները: **Թեմա 2**՝ Տեղեկատվական տեխնոլոգիաներ.արդի վիճակը, դերը բիզնեսում և զարգացման միտումները: **Թեմա 3**՝ Տեղեկատվության հավաքագրման, պահպանման վերլուծության և փոխանցման տեխնոլոգիա: **Թեմա 4**՝ Տեղեկատվական համակարգերի դասակարգումը: **Թեմա 5**՝ Ինտրանետ/ինտերնետ-տեխնոլոգիաների զարգացումը: **Թեմա 6**՝ էլեկտրոնային առևտուր: **Թեմա 7**՝ Վիրտուալ շուկաների դասակարգումը: **Թեմա 8**՝ Կազմակերպության ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատում: **Թեմա 9**՝ Ժամանակակից կորպորատիվ տեղեկատվական համակարգեր: **Թեմա 10**՝ Վերլուծական տեղեկատվական համակարգեր: **Թեմա 11**՝ Լոգիստիկայի տեղեկատվական համակարգեր: **Թեմա 12**՝ Աուտսորսինգի տեսակները: **Թեմա 13**՝ ՀՀ օրենքներ և նորմատիվ բազա հեռահաղորդակցության ոլորտում, տվյալների անվտանգության և տեղեկատվության ապահովման կազմակերպումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/H24. Ռիսկերի կառավարում (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համալիր գիտելիքներ հաղորդել կազմակերպություններում ռիսկերի կառավարման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** ռիսկերի կառավարման էությունը և նշանակությունը,
2. **Կհասկանա** ռիսկերի կառավարման հիմնական պրոբլեմները,
3. **Կկարողանա** գնահատել ընկերության ռիսկերի կառավարման արդյունավետությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ռիսկերի հասկացությունը և էությունը: **Թեմա 2**՝ Ռիսկ մենեջմենթի հասկացությունը, էությունը և բովանդակությունը: **Թեմա 3**՝ Ռիսկ մենեջմենթի աքսիոմաները, օրենքները և սկզբունքները: **Թեմա 4**՝ Ռիսկերի մոնիթորինգ: **Թեմա 5**՝ Ռիսկ-մենեջմենթի գործառնությունները: **Թեմա 6**՝ Ռիսկերի կառավարման արդյունավետությունը: **Թեմա 7**՝ Ռիսկերի կառավարման մեթոդները, դրանց հասկացությունները և տեսակները: **Թեմա 8**՝ Ռիսկերի կառավարման մարտավարություն և ռազմավարություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Լրացական դասընթացներ

18/H01. Անգլերեն լեզու (0 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Երկու կիսամյակ տևողությամբ ուսումնական գործունեության ընթացքում “Կառավարում” բաժնի ուսանողներին ուսուցանել մասնագիտական անգլերեն լեզու՝ կառավարման կոնտեքստում, որն իր մեջ ներառում է համապատասխան մասնագիտական տերմինների ու արտահայտությունների, քերականական ժամանակաձևերի ու կառուցվածքների ուսումնասիրում և տիրապետում, մեթոդական կողմնորոշիչ ցուցումներ՝ ձեռք բերած գիտելիքները ամրապնդելու և վերարտադրելու նպատակով, տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու սովորողներին զարգացնելու խոսքային հմտություններն ու կարողությունները, լրացուցիչ մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի վրա ինքնուրույն աշխատանք՝ օգտագործելով համապատասխան բառարաններ և ձեռնարկներ /տեքստերի թարգմանություն՝ անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն, տեքստերի վերարտադրում, բառարանային աշխատանք և այլն/: Ծրագրի շրջանակներում նախատեսված է սովորողներին ծանոթացնել լեզուն ուսումնասիրելու հետ կապված խնդիրներին, նպատակներին, սկզբունքներին, ինչպես նաև օգնել հաղթահարելու սովորելու ընթացքում հանդիպող դժվարություններն ու խոչընդոտները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **տՀճ³ Զ»՝** ձև անգլերեն լեզվի քերականական ժամանակաձևերին, կառուցվածքներին, մասնագիտական բառապաշարին, լեզվամտածողական հմտություններին, որոնք հնարավորություն կտան սովորողներին ինքնուրույն օգտվել մասնագիտական գրականությունից,
2. **կարողանալ** անգլերենով խոսել մասնագիտական և ոչ մասնագիտական միջավայրում,
3. **մասնակցել** անգլերեն լեզվով տեղի ունեցող բանավեճերի, երկխոսությունների,
4. **պատրաստել** ներկայացումներ /պրեզենտացիաներ/, զարգացնելու բանավոր և գրավոր խոսքը:

Բովանդակությունը.

«Մասնագիտական օտար լեզու» դասընթացը նախատեսված է ոչ մասնագիտական բաժինների ուսանողների համար: Առարկան ենթադրում է ապահովել անմիջական լեզվական միջավայր ուսանողների համար, ծանոթացնել նրանց անգլերենի առանցքային քերականական կառույցներին, մասնագիտական տերմինաբանությանը, իդիոմատիկ արտահայտություններին, աջակցել լեզվամտածողության, լեզվագագացողության զարգացմանը և ստեղծել համապատասխան պայմաններ հաղորդակցության գործընթացում լեզուն կիրառելու համար: Դասընթացը հատուկ շեշտ է դնում բանավոր մասնագիտական խոսքին և նրա ավտոմատ զարգացման գիտելիքներին, որը իրագործվում է բանավոր խոսքը խթանող մի շարք առաջադրանքների միջոցով:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

Տիրույթային ծրագրի պարտադիր դասընթացներ

15/H01. Արժույթային համակարգեր և հարաբերություններ (4 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ, 1-ին կիսամյակ: Եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արժույթային համակարգերի ձևավորման և արժույթային հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** ազգային, միջազգային և տարածաշրջանային արժույթային համակարգերի ձևավորման սկզբունքների մասին,
2. **Կտիրապետի** արժույթային հարաբերությունների առաջացման և արժույթների փոխարժեքների սահմանման կարգին,
3. **Կհասկանա** միջազգային արժույթային շուկայի գործունեության մեխանիզմները,
4. **Կծանոթանա** արժույթային քաղաքականության, արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Փողի շուկան: Փողի պահանջարկն ու առաջարկը: Հավասարակշռությունը փողի շուկայում:

Թեմա 2՝ Արժույթային համակարգերի ձևավորումը և զարգացումը: **Թեմա 3**՝ Միջազգային արժույթային համակարգի ձևավորման փուլերը: **Թեմա 4**՝ Արժույթային հարաբերություններ և արժույթային փոխարժեքներ: **Թեմա 5**՝ Արժույթի փոխարժեքների վրա ազդող գործոնները: **Թեմա 6**՝ Միջազգային արժույթային շուկա: **Թեմա 7**՝ Արժույթային քաղաքականությունը, արժույթային փոխարժեքի կարգավորումն ու վերահսկողությունը: **Թեմա 8**՝ Արժույթային քաղաքականությունը և արժույթային կարգավորումը ՀՀ-ում: **Թեմա 9**՝ Միջազգային արժույթային կազմակերպությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

15/H03. Տնտեսության պետական կարգավորում (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մակրոտնտեսական կարգավորման առարկան և նրա խնդիրները, առարկայի ուսումնասիրության մեթոդաբանությունը և մեթոդները: Պարզաբանել երկրի մակրոտնտեսական քաղաքականության հիմնախնդիրները տնտեսական և սոցիալական ոլորտներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** մակրոտնտեսական կարգավորման անհրաժեշտությունը և նշանակությունը տնտեսության պետական կարգավորման գործում,
2. **Կհասկանա** մակրոտնտեսական քաղաքականության հիմնախնդիրները տնտեսական և սոցիալական զարգացման գործում,
3. **Կկարողանա** մակրոտնտեսական կարգավորման մեխանիզմները օգտագործել տնտեսական ու սոցիալական տարբեր ոլորտներում, գործնական աշխատանքներում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մակրոտնտեսական կարգավորման առարկան և խնդիրները: **Թեմա 2**՝ Մակրոտնտեսական կարգավորման մեթոդաբանությունը: **Թեմա 3**՝ Մակրոտնտեսական կարգավորման պետական մարմինները և դրանց գործառնությունները:

Թեմա 4՝ Մակրոտնտեսական քաղաքականությունը և սոցիալ- տնտեսական ծրագրերը: **Թեմա 5**՝ Ազգային արդյունքի արտադրությունը, բաշխումը և օգտագործումը: **Թեմա 6**՝ Տնտեսական աճ և արդյունավետություն: **Թեմա 7**՝ Մակրոտնտեսական քաղաքականությունը արտադրության ճյուղերում: **Թեմա 8**՝ Ներդրումային քաղաքականություն:

Թեմա 9՝ Սոցիալական քաղաքականություն: **Թեմա 10**՝ Դրամավարկային քաղաքականություն: **Թեմա 11**՝ Հարկաբյուջետային քաղաքականություն: **Թեմա 12**՝ Բնակչության զբաղվածության քաղաքականություն: **Թեմա 13**՝ Գնագոյացման մակրոտնտեսական կարգավորում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսվում է 2 ընթացիկ քննություններ, որոնք կանցկացվեն գրավոր, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Կանցկացվի բանավոր 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցաշարը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

20/H01. Կառավարման տեսության արդի հիմնախնդիրները (5 կրեդիտ)
Շաբաթական 6 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Կառավարման տեսության արդի հիմնախնդիրները առարկայի դասավանդման նպատակն է ապագա մագիստրոսներին հասու դարձնել կառավարման տեսության մեջ տեղի ունեցող վերջին զարգացումները, համաշխարհային պրակտիկայում կիրառական նշանակություն ունեցող կառավարման արդիական մոտեցումները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կկարողանա** բնութագրել կառավարման տեսության արդի նշանակությունը, նոր տեսությունների ձևավորումը, առանձին կազմակերպությունների առաքելությունը, նպատակների իրագործումը և այլն: Կառավարման տեսության արդի հիմնախնդիրների լուծման մեխանիզմները, գործիքները և տեսակները:

2. **մեկնաբանել** կառավարման տեսության արդի հիմնախնդիրները տարբեր տեսությունների համատեքստում:

3. **բացահայտել** կառավարման տեսության արդի հիմնախնդիրների վերլուծության միջոցով գտնել դրանց լուծման ուղիները: Կառավարման տեսության արդի հիմնախնդիրների լուծման տեսական և գործնական մոտեցումները:

4. **կիրառել** գիտելիքները կառավարման տեսության արդի հիմնախնդիրները լուծելու գործընթացում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2**՝ Տնտեսական քաղաքականություն. ռազմավարություն և մարտավարություն: **Թեմա 3**՝ Կառավարման տեսության զարգացման միտումները: **Թեմա 4**՝ Տնտեսության առանձին ոլորտների կառավարման հիմնախնդիրները: **Թեմա 5**՝ Կառավարման գործառնությունների կատարելագործման և ժամանակակից ձևերի անհրաժեշտությունը: **Թեմա 6**՝ Կառավարման ժամանակակից մեթոդների, սկզբունքների և որոշումների ընդունման մոդելների կիրառությունը: **Թեմա 7**՝ Կազմակերպական վարքագծի ժամանակակից ըմբռումները: **Թեմա 8**՝ Հանրային կառավարման արդի հիմնախնդիրները և կատարելագործման ուղղությունները: **Թեմա 9**՝ Ֆունկցիոնալ և ճյուղային նախարարությունների, կառավարությանն առնչվող մարմինների, կոմիտեների և օրենքով ստեղծված մարմինների գործառնությունները պետության (տնտեսության) կառավարման համակարգում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/H02. Բանկային մենեջմենթ (4 կրեդիտ)
Շաբաթական 6 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ունկնդիրներին ծանոթացնել առևտրային բանկերի գործունեության կառավարման առանձնահատկություններին և կարգավորման մեխանիզմներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կծանոթանա** առևտրային բանկի կառավարման հիմունքներին,

2. **կտիրապետի** բանկի պարտավորություններին և կապիտալ, ակտիվների, վարկային պորտֆելի, իրացվելիության և ռիսկերի կառավարման հիմնախնդիրներին,

3. **կլիմանա** բանկի գործունեության ծրագրավորման, լիցենզավորման, ֆինանսական առողջացման, սնանկացման և լուծարման առանձնահատկությունները,

4. **կհասկանա** բանկային գործունեության վերլուծության և գնահատման մեթոդները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Առևտրային բանկի կառավարման հիմունքները: **Թեմա 2**՝ Բանկերի ծագումը, բնութագիրը, կազմակերպական կառուցվածքը և դասակարգումը: **Թեմա 3**՝ Բանկային գործունեության իրավական կարգավորումը: **Թեմա 4**՝ Բանկերի գործառնությունները և մատուցվող ծառայությունները: **Թեմա 5**՝ Բանկի պարտավորությունների և կապիտալի կառավարումը: **Թեմա 6**՝ Բանկերի ակտիվային գործառնությունները և դրանց կառավարումը: **Թեմա 7**՝ Ռիսկերի գնահատումը և կառավարումը բանկերում: **Թեմա 8**՝ Բանկային գործունեության կարգավորումը և

վերահսկողությունը: **Թեմա 9**՝ Բանկային գործունեության վերլուծության և գնահատման համակարգը: **Թեմա 10**՝ Բանկային գործունեության լիցենզավորումը: **Թեմա 11**՝ Բանկերի վերակազմավորումը և լուծարումը: Բանկերի սնանկությունը: **Թեմա 12**՝ Բանկային գործունեության ծրագրավորումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3, միավոր: Միավորների քայլը 0.5 է:

20/H03. Պորժառնական կառավարում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել գորժառնական կառավարման հիմունքներին, խնդիրներին, գորժառնություններին:

Կրթական արդյունքներն.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** գորժառնական կառավարման հիմունքների մասին,
2. **կհասկանա** գորժառնությունների կառավարման տեխնոլոգիաների մշակումներն,
3. **կկարողանա** կիրառել ծառայությունների գորժառույթներն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գորժառնությունների կառավարման հիմունքներ: **Թեմա 2**՝ Արտադրական գորժառնություններ: **Թեմա 3**՝ Ծառայությունների գորժառնություններ: **Թեմա 4**՝ Գորժառնությունների ռազմավարությունները: **Թեմա 5**՝ Ապրանքների և ծառայությունների պահանջարկի կանխատեսումը: **Թեմա 6**՝ Ապրանքի պլանավորումը և գործընթացի նախագծումը: **Թեմա 7**՝ Երկարաժամկետ կարողությունների պլանավորումը եւ հզորությունների տեղակայումը: **Թեմա 8**՝ Որակի կառավարում: **Թեմա 9**՝ Գորժառնությունների կառավարման տեխնոլոգիական մշակումները: **Թեմա 10**՝ Կազմակերպում և մարդկային ռեսուրսներ: **Թեմա 11**՝ Գլոբալ մատակարարման շղթայի կառավարումը: **Թեմա 12**՝ Համընդհանուր արտադրության պլանավորումը: **Թեմա 13**՝ Նյութերի անկախ պահանջարկի կառավարում: **Թեմա 14**՝ Նյութերի կախյալ պահանջարկի կառավարումը: **Թեմա 15**՝ Նյութական պահանջմունքների պլանավորումը: **Թեմա 16**՝ Ճիշտ ժամանակին արտադրություն: **Թեմա 17**՝ Ծառայությունների համակարգի նախագծումն ու ժամանակացույցը: **Թեմա 18**՝ Նախագծի կառավարում: **Թեմա 19**՝ Որակի վերլուծություն, գնահատում և կատարելագործում: **Թեմա 20** Լոգիստիկայի հիմունքները: **Թեմա 21**՝ Լոգիստիկայի չափանիշները : **Թեմա 22**՝ Համակարգի գործողության պահանջները: **Թեմա 23**՝ Համակարգի պահպանման կոնցեպցիան:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

20/H05. Վարչական կառավարում (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համալիր գիտելիքներ հաղորդել վարչական կառավարման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** վարչական կառավարման տեսություններն ու սկզբունքները,
2. **կհասկանա** վարչական կառավարման հիմնական պրոբլեմները,
3. **կկարողանա** գնահատել վարչական կառավարման արդյունավետությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վարչական կառավարման հասկացությունը և եությունը: **Թեմա 2**՝ Վարչական կառավարման համակարգը: **Թեմա 3**՝ Վարչական կառավարման մեթոդները: **Թեմա 4**՝ Վարչական որոշումների ընդունման գործընթացը: **Թեմա 5**՝ Վարչական վերահսկողություն: **Թեմա 6**՝ Քաղաքացիական ծառայության համակարգը: **Թեմա 7**՝ Կոնֆլիկտների վարչական կառավարումը: **Թեմա 8**՝ Վարչական կառավարման միջազգային փորձը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/H07. Արտադրական մենեջմենթ (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասախոսությունների, առաջադրանքների, գործնական աշխատանքների, ինտերակտիվ քննարկումների, խաղերի միջոցով տեղեկացնել, ներկայացնել, բացատրել, վերհանել, ամրապնդել և հասցնել իմացության, տիրապետման և կիրարկման աստիճանի Արտադրական մենեջմենթի հիմնադրույթները, ցուցանիշները, չափանիշները, ֆոկուսները, ներքին և արտաքին միջավայրերը, արտադրական մենեջմենթի քարտեզագրումը և մեթոդները, մեթոդների ընտրությունը, կիրառումը, համադրումները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** Արտադրական մենեջմենթի հիմնադրույթները, ցուցանիշները, չափանիշները, սկզբունքները,
2. **կհասկանա** միջավայրերի ազդեցությունները, մեթոդների եությունը, քարտեզագրման սկզբունքները,
3. **կտիրապետի** արտադրական մենեջմենթի առանձնահատկություններին, իրականացնի մեթոդների ընտրությունը, վերլուծությունները և գործնական համադրումները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Արտադրությունների (ծառայությունների) մենեջմենթ, հիմնադրույթներ: **Թեմա 2**՝ Արտադրությունների ներքին և արտաքին միջավայրեր: **Թեմա 3**՝ Արտադրությունների (ծառայությունների) ցուցանիշները, չափանիշները և ֆոկուսները: **Թեմա 4**՝ Արտադրությունների (ծառայությունների) ստեղծման, զարգացման, ընդլայնման և կատարելագործման սկզբունքները: **Թեմա 5**՝ Արտադրությունների (ծառայությունների) մենեջմենթի քարտեզագրում: **Թեմա 6**՝ Արտադրությունների (ծառայությունների) մենեջմենթի մեթոդները: **Թեմա 7**՝ Արտադրությունների (ծառայությունների) մենեջմենթի մեթոդների ընտրության եղանակները: **Թեմա 8**՝ Արտադրությունների (ծառայությունների) մենեջմենթի մեթոդները Գործնական կիրառություն: **Թեմա 9**՝ Համադրումներ և վերլուծություններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ յուրաքանչյուրը 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար՝ 3,3,4: Միավորների քայլը 0.5 է:

20/H08. Հանրային կառավարում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Տնտեսության կառավարման պետական մարմինների և դրանց գործառույթները:

Կրթական արդյունքներն.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** հանրային կառավարման կուլտուրայի գնահատումը և կատարելագործման ուղղությունների մշակում հանրային կառավարման մոդելների մշակում Հանրային կառավարման կառուցվածքի ձևավորում,

2. կհասկանա Հայաստանի Հանրապետության տնտեսության կառավարման արդյունավետության գնահատման մեթոդիկան

Հայաստանի Հանրապետության տնտեսության միտումները և աճի գերակայությունները,

3. կկարողանա տիրապետել Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման համակարգին

Հայաստանի Հանրապետության տնտեսության կառավարման արդյունավետության գնահատման մեթոդիկային, միտումներին և աճի գերակայություններին, պետական ընկերությունների կառավարմանը զարգացող շուկայական տնտեսությամբ երկրներում, սեփականության ռացիոնալ կառուցվածքի ձևավորման հիմնախնդիրներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կառավարման էությունը և մեթոդաբանությունը: **Թեմա 2՝** Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման համակարգը: **Թեմա 3՝** Հայաստանի Հանրապետության տնտեսության կառավարման արդյունավետության գնահատման մեթոդիկան, միտումները և աճի գերակայությունները: **Թեմա 4՝** Պետական ընկերությունների կառավարումը զարգացող շուկայական տնտեսությամբ երկրներում: **Թեմա 5՝** Սեփականության ռացիոնալ կառուցվածքի ձևավորման հիմնախնդիրները: **Թեմա 6՝** Կազմակերպում և մարդկային ռեսուրսներ: **Թեմա 7՝** Որակի վերլուծություն, գնահատում և կատարելագործում: **Թեմա 8՝** Համակարգի գործողության պահանջները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց , յուրաքանչյուրը համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

20/Մ12. Ճգնաժամային կառավարում (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համալիր գիտելիքներ հաղորդել կազմակերպությունների ճգնաժամային կառավարման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** ճգնաժամային կառավարման համակարգը, մեխանիզմները, գործընթացները, ոճը և արդյունավետությունը,
2. **կհասկանա** ճգնաժամային կառավարման հիմնական պրոբլեմները,
3. **կկարողանա** մշակել կազմակերպության հակաճգնաժամային ռազմավարությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ճգնաժամերը մակրո և միկրոգարգացման պայմաններում: **Թեմա 2՝** Ճգնաժամային կառավարման հնարավորությունը, անհրաժեշտությունը և բովանդակությունը: **Թեմա 3՝** Ճգնաժամային իրավիճակների պետական կարգավորումը: **Թեմա 4՝** Ձեռնարկությունների սնանկացումը: **Թեմա 5՝** Ճգնաժամային կառավարման ռազմավարությունը: **Թեմա 6՝** Ճգնաժամային կառավարման հիմնական գործոնները: **Թեմա 7՝** Ճգնաժամային կառավարման մարդկային գործոնը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/Մ14. Մարքեթինգի կառավարում (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համալիր գիտելիքներ հաղորդել կազմակերպություններում մարքեթինգի կառավարման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** մարքեթինգի կառավարման էությունը և նշանակությունը,
2. **կհասկանա** մարքեթինգի կառավարման հիմնական պրոբլեմները,
3. **կկարողանա** գնահատել ընկերության մարքեթինգի կառավարման արդյունավետությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մարքեթինգի էությունը և նշանակությունը: **Թեմա 2**՝ Մարքեթինգային կառավարման էությունը: **Թեմա 3**՝ Մարքեթինգային կառավարման կազմակերպում: **Թեմա 4**՝ Մարքեթինգի ֆունկցիոնալ ռազմավարությունները: **Թեմա 5**՝ Մարքեթինգային տեղեկատվության ապահովումը: Մարքեթինգային վերլուծություններ: **Թեմա 6**՝ Մարքեթինգային նպատակների սահմանումը: **Թեմա 7**՝ Ապրանքի կառավարում: **Թեմա 8**՝ Գնի կառավարում: **Թեմա 9**՝ Առաջնորման կառավարում: **Թեմա 10**՝ Տեղաբաշխման կառավարում: **Թեմա 11**՝ Մարքեթինգային ծախսերի սահմանումը: **Թեմա 12**՝ Մարքեթինգային վերահսկողություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/H28. Ֆինանսական մենեջմենթ (4 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել ֆինանսական մենեջմենթի, նրա տեղեկատվական և մեթոդաբանական համակարգի, առարկայի, նպատակների, խնդիրների, սկզբունքների, ուղղությունների, ուսումնասիրության մեթոդների և եղանակների մասին:

Օրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև հմտություններ ու կարողություններ ֆինանսական վերլուծություն իրականացնելու և ֆինանսական մենեջմենթի մեթոդաբանական համակարգը կիրառելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

0. **կսիրապետի** ֆինանսական մենեջմենթի տեղեկատվական համակարգին,
1. **կիմանա** ֆինանսական մենեջմենթի մեթոդաբանական համակարգը,
2. **կծանոթանա** ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատմանը

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆինանսական մենեջմենթը և գործարար միջավայրը: **Թեմա 2**՝ Ֆինանսական մենեջմենթի տեղեկատվական համակարգը: **Թեմա 3**՝ Ֆինանսական մենեջմենթի մեթոդաբանական համակարգը: **Թեմա 4**՝ Շահութաբերության ցուցանիշների հաշվարկը ֆինանսական մենեջմենթում: **Թեմա 5**՝ Իրացվելիության ցուցանիշների հաշվարկը ֆինանսական մենեջմենթում: **Թեմա 6**՝ Ֆինանսական կայունության, գործարար և շուկայական ակտիվության ցուցանիշների հաշվարկը ֆինանսական մենեջմենթում: **Թեմա 7**՝ Ֆինանսական ռիսկերի զսպումը և բանկերի գործունեության տնտեսական նորմատիվները: **Թեմա 8**՝ Բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատման համակարգը: **Թեմա 9**՝ Ֆինանսական լծակի հասկացությունը և կապը ֆինանսական ռիսկերի հետ: **Թեմա 10**՝ Ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատումը ֆինանսական մենեջմենթում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/H33. Ռազմավարական կառավարում (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համալիր գիտելիքներ հաղորդել կազմակերպությունների ռազմավարական կառավարման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կլիմանա** ռազմավարական կառավարման բովանդակությունը և կառուցվածքը,
2. **Կհասկանա** ռազմավարական կառավարման մեթոդները,
3. **Կկարողանա** մշակել կազմակերպության զարգացման ռազմավարություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ռազմավարական կառավարման ընդհանուր բնութագիրը: **Թեմա 2**՝ Միջավայրի վերլուծության իրականացումը: **Թեմա 3**՝ Կազմակերպության առաքելության և նպատակների սահմանումը: **Թեմա 4**՝ Կազմակերպության ռազմավարության մշակումը: **Թեմա 5**՝ Ռազմավարության իրագործումը և վերահսկողությունը: **Թեմա 6**՝ Արտադրանքի կոնցեպցիան ռազմավարական կառավարման համակարգում: **Թեմա 7**՝ Արտադրանքի դինամիկան: **Թեմա 8**՝ Կազմակերպության ապրանքային ռազմավարությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/H58. Կառավարման հոգեբանություն (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ: Եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել մարդկային ռեսուրսների կառավարման հոգեբանության և բիզնես հոգեբանության վերաբերյալ: Ծանոթացնել մարդկային ռեսուրսների կառավարման գործառնությունների, սկզբունքների հոգեբանական վերլուծությանը, արդյունավետ կառավարման հոգեբանական գործոններին, ղեկավարի հոգեբանական առանձնահատկություններին, գովազդի, ղեկավար-ենթակա փոխհարաբերություններին, ներգործության, կոնֆլիկտների պատճառների և հարթման ուղիների, լիդերության վերաբերյալ գիտական տարբեր տեսությունների ու հայեցակարգերի բացատրություններին, առաջատար երկրների կառավարման մոդելների հոգեբանական վերլուծություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

Թեմա 1՝ Ներքին զբոսաշրջություն առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները: էքսկուրսիաների մշակման հիմնական փուլերը: Անիմացիոն գործունեության տեսակները: **Թեմա 2**՝ Մշակութա-ճանաչողական զբոսաշրջության ընդհանուր բնութագիրը: Պատմամշակութային կենտրոնները, նրանց դասակարգումն ու դերը զբոսաշրջային երթուղիների մշակման գործում: Մշակութա-ճանաչողական զբոսաշրջությունը ՀՀ-ում: **Թեմա 3**՝ Կրոնական զբոսաշրջության տեսակները և փաթեթների կազմումը: Աշխարհի հիմնական կրոնական ու ուխտագնացության զբոսաշրջային երթուղիները: Կրոնական զբոսաշրջությունը ՀՀ-ում: **Թեմա 4**՝ Առողջարանային զբոսաշրջության հիմնական տեսակները: Առողջարանային զբոսաշրջության միջազգային կենտրոնները: Առողջարանային զբոսաշրջության հիմնական տեսակները ՀՀ-ում: **Թեմա 5**՝ Գյուղական զբոսաշրջության ընդհանուր բնութագիրը: Գյուղական զբոսաշրջության միջազգային կենտրոնները: Գյուղական զբոսաշրջության տուրփաթեթների առանձնահատկությունները: **Թեմա 6**՝ Իրադարձային զբոսաշրջության ընդհանուր բնութագիրը: Իրադարձային զբոսաշրջության տուրփաթեթների առանձնահատկությունները: Սպորտային և էքստրիմալ զբոսաշրջություն: Գործարար զբոսաշրջության առանձնահատկությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր հարցմամբ՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/H51.Գովազդը միջազգային զբոսաշրջության մեջ (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համապարփակ ներկայացնել զբոսաշրջության մեջ գովազդի դերն ու կարևորությունը: Համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ զբոսաշրջության ոլորտը հանդիսանում է խոշոր գովազդատուներից մեկը: Լարված մրցակցությանը դիմանալու և շահույթ ստանալու նպատակով գովազդն անգերազանցելի գործոն է դարձել: Այդ իսկ պատճառով գովազդի ուսումնասիրումը, առանձնահատկությունների ու տարատեսակ դրսևորումների տիրապետումը, պատրաստման նրբություններին ծանոթանալը և այն ճիշտ կառուցելը պարզապես անհրաժեշտ է ապագա զբոսաշրջության մասնագետի համար:

Ուսանողներին որոշակի տեղեկություններ տալ գովազդատուի, գովազդային գործակալությունների, տուրիստական ընկերությունների, գործակալների և նրանց յուրահատուկ աշխատանքի մասին՝ միմյանց հետ աշխատանքային շփման եզրեր գտնելու, ճշգրիտ տվյալներ հավաքելու տարբեր գովազդային միջոցների՝ հատկապես հեռուստակայանների հեռուստալսարանների վարկանիշների վերաբերյալ, կարողանալ ձկուն ու մասնագիտական հմտություն դրսևորել:

Դասընթացի շրջանակներում ուսանողները դասախոսությունների և գործնական աշխատանքների միջոցով ոչ միայն գիտելիքներ են ձեռք բերում,այլև զարգացնում վերլուծական ունակություններ և ինքնուրույն ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում կատարում տուրիստական գործակալությունների և հյուրանոցների գովազդային գործունեության համեմատական վերլուծություններ և կազմում զբոսաշրջության իրենց նախագծերը, ձեռք բերում հմտություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** գովազդի ծագման ու զարգացման պատմությունն աշխարհում ու Հայաստանում, գովազդի մասին՝ ընդհանրապես և տուրիստական գովազդի՝ մասնավորապես, տուրիստական գովազդի առանձնահատկությունների դրսևորումները գովազդի տարածման միջոցներում,

2. **կհասկանա** գովազդի դերն ու նշանակությունը՝ որպես առևտրի շարժիչ ուժի և շահույթի ստացման միջոցի, տարածման միջոցներում ներկայացվող գովազդների պահանջները, ճիշտ պատրաստված գովազդի առավելությունները,

3. կկարողանա վերլուծել մրցակից զբոսաշրջային գործակալությունների և հյուրանոցների գործելակերպը, տիրապետել գովազդային ժամանակի բաշխման և վաճառքի նրբություններին, զբոսաշրջային գործունեության հմտություններին՝ ավելի մեծ շահույթ ապահովելու համար, ինքնուրույն կազմել զբոսաշրջության նախագիծ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գովազդի ծագման ու զարգացման պատմությունը, ՋԼՄ –ի դերը գովազդի ձևավորման գործում: Գովազդ, հիմնական հասկացություններ, գործառույթներ, գովազդային արտադրանք ու գովազդային տեքստ, գովազդի ոլորտի թիրախներ, գովազդային հաղորդակցության սուբյեկտներ, ապրանքի և ծառայությունների գովազդ, ապրանքանիշ և բրենդ: Գովազդի տեսակները, նպատակը, բաղկացուցիչները: Հեռուստատեսության և ռադիոյի դերը գովազդման ժամանակ: Գովազդի մասին ՀՀ օրենքը: **Թեմա 2**՝ Զբոսաշրջային գովազդի առանձնահատկությունները, էությունը, նպատակը, բաղկացուցիչները տեսակները: Միջազգային զբոսաշրջային գովազդի իրավական կարգավորման հիմնական առանձնահատկությունները: Գովազդի առանձնահատկությունները զբոսաշրջության մեջ և տարբերություններն այլ գովազդային ոլորտներից: Գովազդի տեսակներն ըստ տարածման միջոցների, ոլորտների և գործառույթների: **Թեմա 3**՝ Հյուրանոցային գովազդ, գովազդի տարածման միջոցները: Գովազդի դերակատարումը հյուրանոցային բիզնեսում և նպատակային որոշումները: Հյուրանոցային գովազդի ազդեցությունը վաճառքի մակարդակի և սպառողների վրա: Գովազդի տարածման միջոցների ընտրությունը:

Թեմա 4՝ Գովազդային արշավի մոդելավորում: Գովազդի բաշխումը և տեղադրման ձևերը: Գովազդային արշավի ծրագրավորում, ժամանակացույցի, մրցակիցների ծրագրերի ուսումնասիրություն, մշակում, կազմում և իրականացում: Գովազդների և գովազդային փաթեթների բաշխման և տեղադրման տեսակները: **Թեմա 5**՝ Իրացում, մենեջմենթ, գովազդ: Զբոսաշրջային գովազդի ժամանակի վաճառքը փոքր և միջին շուկաներում: Գովազդային շուկայի ուսումնասիրություն և ստացված շահույթի օգտագործում: **Թեմա 6**՝ Վարկանիշային համակարգ և լսարան: Վարկանիշների դերը գովազդային ժամանակի վաճառքի համակարգում: Վարկանիշային հաշվարկման արդյունավետ մեթոդները: Գովազդի ազդեցությունը թիրախային և պոտենցիալ լսարանի վրա: Թեսթավորման մեթոդների կիրառումը որպես զբոսաշրջային գովազդի ազդեցության որոշման միջոց:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/H56. Միջազգային տուրիզմի աշխարհագրություն (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ձևավորել առարկայական – մասնագիտական գիտելիքների, իմացության և ունակությունների համակցություն ըստ առաջարկվող ժամաքանակի և չափորոշիչների. հաղորդել համապատասխան գիտելիքներ ռեկրեացիոն աշխարհագրության մասին: Դասընթացի շրջանակներում ուսանողները ծանոթանում են Եվրոպական, Ասիական, Ամերիկյան գոտիների, ավստրալիայի և Օվկիանիայի զբոսաշրջության զարգացման գործընթացներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** «Զբոսաշրջության աշխարհագրություն» գիտության զարգացման պատմությունը: Ռեկրեացիոն հիմնական գոտիների բաշխման առանձնահատկությունները,
2. **կհասկանա** զբոսաշրջության էությունն ու նպատակները, զբոսաշրջության ոլորտի խնդիրները, տուրերի անցկացման առանձնահատկությունները, մեթոդներն ու ձևերը աշխարհում և Հայաստանում,
3. **կկարողանա** մեկնաբանել զբոսաշրջության զարգացման միտումներն աշխարհում, տարածաշրջանում և մասնավորապես Հայաստանում, կազմել անհատական զբոսաշրջային երթուղիներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Զբոսաշրջության զարգացման գործոնները: Զբոսաշրջության զարգացման ֆիզիկա-աշխարհագրական և բնապահպանական նախադրյալները: Զբոսաշրջության զարգացման բնակչության և պատմամշակութային գործոնները: Զբոսաշրջության զարգացման տնտեսա-աշխարհագրական գործոնները: **Թեմա 2**՝ Զբոսաշրջային հոսքերի աշխարհագրություն: Աշխարհի ռեկրեացիոն գոտիավորում: **Թեմա 3**՝ Եվրոպայի երկրների և Ռուսաստանի զբոսաշրջային

աշխարհագրություն: **Թեմա 4** Ասիայի և Աֆրիկայի երկրների զբոսաշրջային աշխարհագրություն: **Թեմա 5** Ամերիկայի, Ավստրալիայի և Օվկիանի երկրների զբոսաշրջային աշխարհագրություն: **Թեմա 6** Հայաստանի զբոսաշրջային աշխարհագրություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/H57. Էլեկտրոնային տուրիզմ (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսանողների մոտ ապահովել անհրաժեշտ տեսական և գործնական գիտելիքներ էլեկտրոնային տուրիզմի կազմակերպման արդիական ծրագրերի և նրանց կիրառման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա

- Էլեկտրոնային տուրիզմի կազմակերպման արդիական ծրագրերի կիրառման մեթոդները,
- Ծանոթ կլինի “Amadeus” ծրագրի միջավայրին և հրամանային Համակարգին,
- Ծանոթ կլինի “Amadeus” ծրագրում հարցումների կազմակերպման պրակտիկային:

2. Կկարողանա

- ստացած գիտելիքներն օգտագործել վերլուծելու էլեկտրոնային տուրիզմի
- տիպային խնդիրները,
- կազմակերպել հարցումներ ծրագրի միջավայրում,
- օգտագործել ավիատոմսերի, հյուրանոցների առք ու վաճառքի նկարագրության հրահանգները:

3. կտիրապետի

- “Amadeus” ծրագրի գործիքային միջավայրին և հրամանային Համակարգին,
- Քաղաքների, պետությունների և օդանավակայանների կողային համակարգին,
- Ավիատոմսերի և հյուրանոցների առք ու վաճառքի կազմակերպման մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: Ծանոթացում “Amadeus” ծրագրի գործիքային միջավայրին: **Թեմա 2**՝ “Amadeus” ծրագրի հրամանային համակարգը: **Թեմա 3**՝ Քաղաքների, պետությունների, օդանավակայանների կողային համակարգը: **Թեմա 4**՝ Հարցումների կազմակերպում “Amadeus” ծրագրի միջավայրում: **Թեմա 5**՝ Ավիատոմսերի առք ու վաճառքի նկարագրության հրահանգներ: **Թեմա 6**՝ Հյուրանոցների առք ու վաճառքի նկարագրության հրահանգներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ

20/H36. Էթնոհոգեբանություն (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսումնասիրել էթնիկական խմբերի բնութագրերը, էթնոգենեզի հիմնական փուլերը, միջէթնիկական հարաբերությունների տեսակները, ազգային հոգեկերտվածքը և բնավորությունը, ազգային սիմվոլները և ստերեոտիպերը և բացահայտել դրանց կիրառական նշանակության կարևորությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1.կիմանա

այն փաստերը և օրինաչափությունները, որոնք բացահայտում են ազգային խմբերի հոգեբանական առանձնահատկություններն ընդհանրապես և կոնկրետ ազգերինը մասնավորապես,

2.կկարողանա

կապ հաստատել այդ փաստերի և օրինաչափությունների միջև, որոնք վերաբերում են հոգեբանական կողմի ոչ հոգեբանական դրսևորումներին ,

- բացահայտել ազգային բնավորության էությունը և բաղադրիչները , ազգային ինքնագիտակցության կառուցվածքը և ձևավորման փուլերը:

3.կտիրապետի

ազգային սիմվոլների կիրառման հոգեբանական ձևերին և մեթոդներին,

կրոնի և ազգային հոգեկերտվածքի փոխներգործության հոգեբանական կարգավորման հմտություններին՝ ինչպես կրթական համակարգում, այնպես էլ սոցիալական միջավայրում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էթնոս, ազգ և կիրառական էթնոհոգեբանության խնդիրները Էթնոսը (էթնիկական խումբը) սոցիալական խմբի տեսակ է իրեն բնորոշ առանձնահատկություններով: Ազգերն ունեն էթնոսների բոլոր հիմնական գծերը և այն էլ զարգացած վիճակում: Էթնիկական (ազգային) հոգեբանություն կոչվող գիտությունն ուսումնասիրում է էթնիկական խմբի հոգեբանական առանձնահատկությունները, նրա հոգեկան կերտվածքը: **Թեմա 2՝ Էթնիկական ինքնագիտակցություն** Անհատական ինքնագիտակցությունը իր մասին ունեցած պատկերացումների և սեփական անձնային գծերին տրված գնահատականների համակարգն է: Ես-կոնցեպցիան (ինքնագիտակցությունը)

ունի ութ բաղադրիչ, որոնցից մեկը ֆիզիկական է, իսկ մնացած յոթը՝ հոգեբանական: Միջէթնիկական կոնֆլիկտների հետևանքներից մեկն այն է, որ դրանց շնորհիվ բախվող էթնոսների ես-կոնցեպցիաներն առավել հստակ են դառնում: **Թեմա 3՝ Մշակույթ և գլոբալ էթնոխմբային ինքնապաշտպանություն** Ազգի պատմական զարգացման ընթացքում ձևավորվում են մի շարք մշակութային երևույթներ, որոնք կատարում են էթնոպաշտպան գործառույթներ :

Յուրաքանչյուր ազգի կյանքում կրոնը և եկեղեցին մի շարք առումներով նշանակալի դեր են խաղում:

Մշակույթն ընդհանրապես և մշակութային ավանդույթներն ունեն էթնոպաշտպան գործառույթներ : Էթնոսը, հայտնվելով նոր միջավայրում, տիրապետող և մյուս էթնիկական հանրույթների շրջապատում, դեմ առ դեմ հանդիպում է իրեն ձուլելու ցանկություն ունեցող մարդկանց, խմբերի, կազմակերպությունների: **Թեմա 4 Ազգային սիմվոլներ** Ազգային յուրաքանչյուր սիմվոլ իրենից ներկայացնում է ազգի հոգեբանական մի մասի խտացում: Դրանք բազմատեսակ են և ստեղծվում են տարբեր նախնական աղբյուրներից: Էթնոհոգեբանության կարևոր կիրառական խնդիրներից մեկը ազգի ներկայացուցիչների սոցիալականացումն է՝ մասնավորապես, սոցիալական սիմվոլականացումը: Սեփական ազգի սիմվոլների համակարգի յուրացումը անհատին մեծապես պաշտպանված է դարձնում օտար ազդեցություններից, կանխում է ուժացումը, մտածելակերպի և վարքի շեղումները: **Թեմա 5՝ Էթնիկական ստերեոտիպեր** Մարդիկ և սոցիալական խմբերը, մտնելով փոխհարաբերությունների մեջ, ընկալելով միմյանց, սկսում են պատկերացումներ ստեղծել միմյանց մասին: Էթնիկական ստերեոտիպերը որոշակի պատկերացումներ և դիրքորոշումներ են, համոզմունքներ սեփական կամ այլ էթնոսի մասին: Ստերեոտիպերի իմացական բաղադրիչները թեև պարունակում են որոշ ճիշտ տվյալներ առարկայի մասին, սակայն ամենից հաճախ նախապաշարմունքներ են: Էթնիկական ստերեոտիպերի մեծ մասը վերաբերում է էթնիկական բնավորությանը: **Թեմա 6՝ Էթնիկական հոգեկերտվածք, ազգային ոգի և բնավորություն** Էթնոսի հոգեկերտվածքի հիմնական բաղադրիչներն են՝ ա) էթնոսի խառնվածքը, բ) էթնոսի բնավորությունը, գ) էթնոսի ոգին և մտածելակերպը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայքայը 0,5 է:

20/H47. Տրանսպորտային սպասարկում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ապահովել առարկայական-մասնագիտական, տեսակա-մեթոդաբանական, ֆինանսա-տնտեսական գիտելիքների համակարգ ուղղված տրանսպորտային համակարգի գնահատմանը, կատարելագործմանն ու տրանսպորտային համակարգի տեղն ու դերի որոշմանը զբոսաշրջության ոլորտում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.կիմանա տրանսպորտի տեղն ու դերը միջազգային տրանսպորտային համակարգում և Հայաստանում; ուղևորափոխադրումների հիմնական սխեմաներն ու ուղղությունները;

ինֆորմացիոն տեխնոլոգիաները տրանսպորտային համակարգում;

տրանսպորտի հիմնական տեսակներն ու դասակարգումը;

տրանսպորտային դրույքաչափերը (տարիֆները);

տրանսպորտային ոլորտը կանոնակարգող կազմակերպությունները;

տրանսպորտային ապահովագրության առանձնահատկությունները:

2.կհասկանա տրանսպորտային համալիրի էությունը:

3.կկարողանա դասակարգել տրանսպորտային միջոցներն ըստ տեսակների;

տարբերակել փոխադրամիջոցներն ըստ գործառույթների և առանձնահատկությունների;

կազմել ինքնուրույն զբոսաշրջային երթուղիներ՝ ելնելով տվյալ երկրի տրանսպորտային հանգույցի առանձնահատկություններից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: Ընդհանուր տեղեկություններ տրանսպորտային սպասարկման տերմինների, միջազգային կազմակերպությունների, ընդհանուր աշխարհագրության մասին: **Թեմա 2՝** Համաշխարհային տրանսպորտային համակարգը: **Թեմա 3՝** Աշխարհի գլխավոր տրանսպորտային ուղիները (մագիստրանտները): **Թեմա 4՝** Ցամաքային տրանսպորտի հիմնական բնութագիրը: **Թեմա 5՝** Օդային փոխադրումներ: **Թեմա 6՝** Ջրային տրանսպորտ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայքայը 0,5 է:

20/H52. Համաշխարհային մշակույթ (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

«Համաշխարհային մշակույթ» առարկան ուսումնասիրում է մշակութային այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են՝ ճարտարապետությունը, նկարչությունը, երաժշտությունը, թատրոնը, կինոն, գրականությունը և այլն: Ծանոթացնել ինչպես հանրահայտ մշակութային գործիչներին, այնպես էլ նրանց կողմից ստեղծած և համաշխարհային ճանաչում ստացած ստեղծագործություններին: Ծանոթացնել գեղանկարչության հիմնական ուղղություններին՝ իմպրեսիոնիզմ, ռեալիզմ, սյուրիալիզմ, մոդեռնիզմ և այլն:

Գրականության ոլորտում ծանոթացնել պոեզիայի, թատերագրության, վիպագրության և այլ ժանրերի հետ: Ծանոթացնում է պատմական զարգացումների արդյունքում թատրոնների առաջացմանը: Երաժշտության ընդհանուր բնութագրմամբ ծանոթացնում է համաշխարհային ճանաչման արժանացած երգահանների և նրանց ստեղծագործությունների հետ: Կինոյի ստեղծման և զարգացման տարեգրության հետ:

Կրթական արդյունքները.

Ուսումնասիրության արդյունքում մագիստրանտը.

կիմանա հանրահայտ մշակույթային գործիչներին և նրանց ստեղծագործական ժառանգությունը: Գեղանկարչության հիմնական ուղղությունները: Թատրոնների ստեղծման պատմությունը: Ճարտարապետության հիմնական ոճերը, **կկարողանա** տարբերել գեղանկարչության հիմնական ուղղությունները և ճարտարապետական հիմնական ոճերը, **կտիրապետի** համաշխարհային մշակույթի պատմությանը և նրա զարգացման դարաշրջաններին:

Բովանդակությունը

Թեմա 1՝ Մշակույթի ստեղծման ընդհանուր բնութագիրը: Հոգևոր և նյութական մշակույթ: Անտիկ դարաշրջանի մշակույթ: Հին Հունաստանի մշակույթը: Ակրոպոլ տաճարի ճարտարապետական ոճը: Հին Հունաստանի թատրոնների ստեղծումը և առանձնահատկությունները: Հին Հռոմի մշակույթի ընդհանուր բնութագիրը: Թատրոնների ստեղծումը Հին Հռոմում: Գեղանկարչության զարգացումը Հին Հռոմում: **Թեմա 2**՝ Վերածննդի դարաշրջանը Իտալիայում: Լեոնարդո դա Վինչի, Ռաֆայել, Միքելանջելո: Գեղանկարչության ուղղությունները Իտալիայում: Իտալիայի տաճարները և թանգարանները: Վատիկան: **Թեմա 3**՝ Ֆրանսիայի մշակույթի ընդհանուր բնութագիրը: Ֆրանսիական ճարտարապետության առանձնահատկությունները: Թատրոնների ստեղծումը Ֆրանսիայում: Լուվր թանգարանի հիմնադրումը Փարիզում: Թատրոնների ստեղծումը: **Թեմա 4**՝ Գերմանիայի մշակույթի ընդհանուր բնութագիրը: Գրականության ժանրերի ստեղծումը Գերմանիայում (Պ. Ֆլեմինգ. Բ. Օպից): Թատրոնների և դրամատուրգիայի ստեղծումը Գերմանիայում: **Թեմա 5**՝ Անգլիայի մշակույթի ընդհանուր բնութագիրը: Թատրոնների առաջացումը Անգլիայում («Գլոբուս», «Հույս», «Կարապ»): Վ. Շեքսպիրի ստեղծագործական ժառանգության ընդհանուր բնութագիրը: Անգլիայում ճարտարապետության առանձնահատկությունները: Անգլիայի տաճարները և թանգարանները: **Թեմա 6**՝ Հայաստանի մշակույթի ընդհանուր բնութագիրը: Թատրոնների առաջացումը Հայաստանում: Գեղանկարչության առանձնահատկությունները Հայաստանում (Մ. Սարյան, Հով. Այվազովսկի, Վ. Սուրենյանց, Վ. Մախոխյան, Հ. Քաչար): Հայաստանի ճարտարապետության առանձնահատկությունները: Հայաստանի թանգարանների ընդհանուր բնութագիրը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշերը.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր հարցմամբ՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/Մ53. Էքսկուրսիոն գործունեության կազմակերպում (3 կրեդիտ)

Շարաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել էքսկուրսիոն գործունեության կազմակերպման հիմնական գործառնությունները: էքսկուրսիաների դասակարգումը ըստ մի շարք հատկանիշների: Հատկապես առանձնացվում են Հայաստանի ավանդական զբոսաշրջային երթուղիները: Ներկայացվում է ն տարբեր երթուղիներ ըստ նպատակների: Դասավանդման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում զբոսավարի գործունեությանը: Տրվում է նախնական պատկերացումներ զբոսավարի մասնագիտության մասին: էքսկուրսիաների վարման տեխնիկայի, օբյեկտների ցուցադրման մեթոդական հնարքների:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

կիմանա զբոսաշրջային հիմնական ռեսուրսները,

կհասկանա էքսկուրսիաների կազմակերպման հիմնական գործառնությունները,

կկարողանա կատարել երթուղիների կազմակերպում ըստ ուղղությունների, պատրաստել պատմվածքներ ըստ զբոսաշրջային օբյեկտների:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էքսկուրսիոն գործունեության պատմությունը: **Թեմա 2**՝ Էքսկուրսիայի էությունը: **Թեմա 3**՝ Էքսկուրսիոն օբյեկտների ընտրություն, երթուղու մշակումը: **Թեմա 4**՝ Էքսկուրսիայի իրականացում: **Թեմա 5**՝ Քաղաքային էքսկուրսիա: **Թեմա 6**՝ Բնապահպանական էքսկուրսիա : **Թեմա 7**՝ Երկրաբանական էքսկուրսիա արշավներ: **Թեմա 8**՝ Էքսկուրսիա թանգարանային: **Թեմա 9**՝ Էքսկուրսիա պատմա-մշակութային: **Թեմա 10**՝ Էքսկուրսիա կրոնական: **Թեմա 11**՝ Էքսկուրսիա արկածային:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/H54 .Սպասարկման կազմակերպում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զբոսաշրջության արդյունաբերության մեջ կարևորել սպասարկման կազմակերպման համար անհրաժեշտ այն բազմաթիվ ենթահամակարգերի գործունեությունը, որոնք խթանում են համաշխարհային տնտեսության այս ճյուղի արագընթաց զարգացումը: Նաև ծրագրի դասավանդումը նպատակ է հետապնդում նպաստել մասնագիտական գործունեության ընթացքում ուսանողների մոտ համապատասխան հետազոտական գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը՝ ուղղված հյուրընկալության և սպասարկման պրակտիկ ոլորտների գործունեության արդյունավետությունը և առաջարկությունները գնահատելուն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

- կիմանա** ազգային մակարդակով զբոսաշրջության ոլորտի համար մրցունակ սպասարկման դաշտ ստեղծելու սկզբունքներ,
- կհասկանա** զբոսաշրջության ոլորտում սպասարկման կազմակերպման առանձնահատկությունները և սկզբունքները,
- կկարողանա** կատարել համեմատական վերլուծություններ զբոսաշրջության տեսակների բազմազանության միջև:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Զբոսաշրջության ոլորտը սոցիալ-տնտեսական համակարգում՝ որպես ծառայությունների և սպասարկման կազմակերպման կարորագույն հանգույց: **Թեմա 2՝** Զբոսաշրջային ծառայությունների բնույթը և զբոսաշրջային արտադրանքի էությունը: **Թեմա 3՝** Զբոսաշրջության տեսակներում և հիմնական ձևերում կազմակերպվող սպասարկման առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Միջոցառումների (MICE) սպասարկման կազմակերպումը: **Թեմա 5՝** Տեղավորման միջոցների սպասարկման կազմակերպման յուրահատկությունները: **Թեմա 6՝** Հանրային սննդի սպասարկման կազմակերպումը զբոսաշրջության մեջ: **Թեմա 7՝** Սպասարկման կազմակերպման հիմնախնդիրները ժամանցի և զվարճանքի հաստատություններում: **Թեմա 8՝** Տրանսպորտային միջոցներում ծառայությունների կազմակերպման առանձնահատկությունները: **Թեմա 9՝** Անիմացիոն ծրագրերի կարևորումը սպասարկման կազմակերպման մեջ: **Թեմա 10՝** Զբոսաշրջային օպերատորների և գործակալությունների սպասարկման կազմակերպման յուրահատկությունները: **Թեմա 11՝** ՀՀ տեսության մեջ զբոսաշրջության ոլորտի սպասարկման առանձնահատկությունները: **Թեմա 12՝** Ինովացիոն գործունեության ազդեցությունը սպասարկման ոլորտի կազմակերպման մեջ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 5 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

20/H55. Զբոսաշրջության էթիկա (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գործարար շփումների արվեստը և վարվելակարգի կանոնները:

Գործարար հարաբերություններում արդյունավետ գործունեություն ծավալելու համար էթիկայի տիրապետումն անհրաժեշտություն է: Զբոսաշրջության ոլորտում հաղորդակցումը պահանջում է վարվելակերպի կանոնների իմացություն, առանց որի անհնար է փոխշահավետ համագործակցության հաստատումը: Գործնական հանդիպումների ժամանակ բանակցությունների գրագետ վարումը, ճիշտ վարվելակարգը, գործարարին հարիր պատշաճ հագուստը, համապատասխան արտաքինը, կեցվածքը, հղկված շարժ ու ձևը, հաղորդակցման արվեստը և խոսքի էթիկան հանդիսանում են հաջող ավարտի գրավական:

Գործարար հարաբերությունները պահանջում են վարվելակերպի կանոնների յուրացում, պահպանում և կիրառում:

Դասընթացի շրջանակներում ուսանողները ծանոթանում են օտարերկրյա գործընկերների հետ աշխատանքի և գործարար նամակագրության կազմակերպմանը, համընդհանուր և ժամանակակից վարվելակարգի կանոններին ու բարոյական նորմերին, ձեռք բերում բանավոր խոսքի տիրապետման, ինչպես նաև՝ գործարար բանակցությունների վարման հմտություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա փոխշահավետ համագործակցության, գործարար շփումների, , գործարար հաղորդակցության, ծառայողական և բանակցային վարվելակարգի պահանջները,

2. կհասկանա գործարար հարաբերություններում հաղորդակցման և շփման ժամանակ էթիկայի կանոնների պահպանման կարևորությունը, անհրաժեշտությունը,

3. կկարողանա կազմակերպել գործընկերների պատշաճ ընդունելություն, վարել բանակցություններ, հաստատել փոխշահավետ համագործակցություն, կազմել պաշտոնական նամակներ և հրավերներ, լուծել վիճելի խնդիրներ, տիրապետել շփման և հաղորդակցման արվեստին:

Բովանդակությունը.

Թեմա 1 Ընդհանուր տեղեկություններ էթիկայի, էթիկական արժեքների դասակարգման, ուղղությունների, բաժինների, էթիկայի ժամանակակից դրսևորումների, զբոսաշրջության էթիկայի կանոնների, անհրաժեշտության և կիրառման մասին:

ՀՀ օրենքը տուրիզմի մասին: **Թեմա 2** Գործընկերների հետ փոխշահավետ համագործակցության հաստատում, գործարար շփումների մարտավարության մշակում՝ ըստ գործարար վարվելակարգի և կիրառում, բանակցությունների փուլեր, բանակցային վարվելակարգ, բանակցային գործընթացում համաձայնություն դրսևորելու հմտություններ:

Ծառայողական հարաբերությունների էթիկական կանոններ: **Թեմա 3** Գործարար հաղորդակցություն. գործարար նամակագրություն, հեռախոսային զրույց, նամակների պատրաստման կանոնների ճշգրիտ կատարում (գրելաձև, կառուցվածք), արտերկիր ուղարկվող նամակների համապատասխան շարադրում:

Թեմա 4 Պաշտոնական և ոչ պաշտոնական ընդունելություններ, գործարարի իմիջ, հրավերքի կազմակերպում, ընդունելությունների վարվելակարգ, ընդունելությունների տեսակներ, զրույց, խոսք, խոսքի էթիկա, հաղորդակցման արվեստ, հյուրընկալում և հյուրասիրություն: **Թեմա 5** Գործարար հաղորդակցություն արտերկրում. տեղեկացվածություն սովյալ երկրի մշակույթի, պատմության, ազգային յուրահատկությունների, գործարար հաղորդակցության սովորույթների և առանձնահատկությունների մասին: Արտերկրի գործընկերների հրավերքի ձևակերպում, պատվիրակությունների ընդունում՝ ըստ համապատասխան վարվելակարգի, բանակցային գործընթաց՝ վարման կանոններով և արձանագրային պահանջներով:

Թեմա 6 Գործարար շփումներում հոգեբանական ազդեցության դերը բանակցային գործընթացում՝ կարծիքների և տեսակետների արտահայտման, համաձայնության, հակասությունների և դրանց լուծման առումով: Գործարար մարդկանց որոշակի խմբերի պատկանելությունը՝ ըստ նրանց վարքի:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

4. «Ֆինանսներ»

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

05/H02.Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Առարկայի նպատակն է

- 1. ապահովել համակարգչային տարրական գրագիտություն
- 2. ծանոթացնել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին և ուսուցման ոլորտում, ըստ մասնագիտական ուղղվածությունների, դրանց կիրառությունների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

ինչպիսի նորագույն տեխնոլոգիաներ գոյություն ունեն ներկայումս, որոնք կիրառելի են զանազան գիտությունների ուսումնասիրության և դրանց ուսուցման համար:

2. կլարոզանա

աշխատել Windows օպերացիոն համակարգում:

Պատրաստել միջին բարդության տեքստեր :

Մշակել էլեկտրոնային աղյուսակներ և կատարել նրանցում միջին բարդության հաշվարկներ:

Ստեղծել ցուցադրություններ:

Օգտվել համացանցից և էլ փոստի ծառայություններից:

3. կտիրապետի

Microsoft Windows օպերացիոն համակարգում ֆայլերի և թղթապանակների հետ աշխատանքների կազմակերպման մեխանիզմներին:

PowerPoint միջավայրերում տեքստերի, էլեկտրոնային աղյուսակների և ցուցադրությունների պատրաստման մեխանիզմներին և այդ միջավայրերի հնարավորություններին:

MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում՝ Աղյուսակների ձևավորում, բանաձևերի մուտքագրում, գրաֆիկների կառուցում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում:

MS Office Word տեքստային խմբագրիչում

Տեքստի մուտքագրում, ձևավորում, աղյուսակների կառուցում, բանաձևերի մուտքագրում, օբյեկտների հետ աշխատանք, թեստեր և ռեֆերատների պատրաստում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ ԷՄՍ-ի պատմությունը, սերունդները: Անհատական համակարգչի կառուցվածքը, արտաքին և ներքին սարքեր, էլքի-մուտքի սարքեր: Ինֆորմացիայի ներկայացման ձևերը, չափման միավորները: Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր: Օպերացիոն համակարգեր (Windows XP, Windows 7), հիմնական տարրերը: Windows օպերացիոն միջավայրում աշխատանք պատուհանների և ֆայլերի հետ: **Թեմա 2՝** Համակարգային և կիրառական ծրագրեր: Ուտիլիտային ծրագրեր: Վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր: ՏՀՏ գրաֆիկական սարքավորումներ և դրանց կիրառումը մասնագիտական ոլորտում: Հաշվողական ցանցերի դասակարգում: Լոկալ ցանցերի տոպոլոգիա: Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ: Մասնագիտությանը առնչվող օգտակար կայքեր: **Թեմա 3՝** MS Office Word տեքստային խմբագրիչի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Word տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում և ձևավորում: Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստերի պատրաստում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: **Թեմա 4՝** MS Office Excel էլեկտրոնային աղյուսակների գործիքային վահանակի ֆունկցիաները: Տվյալների մուտքագրում, տիպերի հայտարարում և աղյուսակի ձևավորում MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: **Թեմա 5՝** Թվաբանական գործողություններ տվյալների հետ, դիագրամների կառուցում MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Աշխատանք ֆունկցիաների հետ MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: **Թեմա 6՝** MS Office Power Point շնորհանդեսային ծրագրի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Power Point ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում: MS Office PowerPoint ծրագրի դրվագներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատուրը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

16H/01. Մասնագիտության փիլիսոփայական հարցեր (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը

Դասընթացի նպատակն է փիլիսոփայությունը դարձնել մասնագիտական մտածողության մշակույթի անհրաժեշտ տարրերից մեկը: Այն կոչված է ընդլայնելու մագիստրանտների հոգևոր մտահորիզոնը, հաղթահարելու մասնագիտական սահմանափակության շրջանակները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կճանոթանա** դասական և հետդասական փիլիսոփայական հայեցակարգերի հետ,
2. **ձեռք կրերի** մասնագիտական և փիլիսոփայական հիմնահարցերը քննադատաբար վերլուծելու և գնահատելու հմտություններ և ունակություններ,
3. **Կճանոթանա** միջառարկայական հետազոտությունների մեթոդաբանական և աշխարհայացքային հիմքերի հետ:

Բովանդակությունը

Թեմա 1՝ Անտիկ փիլիսոփայության ընդհանուր ակնարկ: **Թեմա 2** Ֆրենսիս Բեկոնը որպես բրիտանական էմպիրիզմի հիմնադիր: **Թեմա 3** Բրիտանական էմպիրիզմի ակունքները, Ջ. Լոկ, Ջ. Բերկլի, Դ. Հյում: **Թեմա 4** Ռ. Դեկարտը որպես եվրոպական ռացիոնալիզմի հիմնադիր: **Թեմա 5**՝ Բ. Կանտը որպես գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր: **Թեմա 6**՝ Նեոկանտականություն: **Թեմա 7**՝ Առաջին պոզիտիվիզմ (Կոնտ, Սպենսեր, Միլ): **Թեմա 8**՝ Երկրորդ պոզիտիվիզմ (Մախ, Դյուգեմ, Պուանկարե), **Թեմա 9**՝ Ամերիկյան պրագմատիզմ: **Թեմա 10**՝ Գիտության փիլիսոփայությունը Լ. Վիտգենշտեյնի հայեցակարգի մեջ, **Թեմա 11**՝ XX դ. տրամաբանական պոզիտիվիզմը: **Թեմա 12**՝ Պոստպոզիտիվիզմ: **Թեմա 13**՝ Տեսության մեթոդաբանական կարգավորիչները: **Թեմա 14**՝ Հերմենևտիկան որպես մարդկային կեցության մասին փիլիսոփայական ուսմունք: **Թեմա 15**՝ Էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը: **Թեմա 16**՝ Լեզվի փիլիսոփայությունը: **Թեմա 17**՝ Պատմության ժամանակակից փիլիսոփայությունը: **Թեմա 18**՝ Գլոբալիզմի փիլիսոփայությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ քննությունից մեկը անց է կացվում մագիստրոսի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Լրացական դասընթացներ

18/H01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն)- 1 (0 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անգլերենի կիրառական օգտագործումը:

Դասընթացի շրջանակներում ուսանողները սովորում են անգլերենի քաղաքական բառապաշարը անգլերեն բնագիր թերթերի ու տեքստերի հիման վրա, որը վերջիններիս մոտ զարգացնում է դասական բնագրերի ընթերցանության և վերլուծության ունակությունները: Դասընթացն անց է կացվում “British Studies” գրքի միջոցով՝ զուգահեռ անգլերեն թերթերի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կհիմանա անգլերեն քաղաքական բառապաշարը պրակտիկայում կիրառելու հմտությունները:

Բովանդակությունը

Թեմա 1՝ Ընդհանուր տեղեկություններ Անգլիայի մասին: Անգլիական թագավորության ծագման պատմությունը: **Թեմա 2**՝ Քաղաքական հրապարակախոսության բառապաշարը, վարժություններ քաղաքական տեքստերի հիման վրա: **Թեմա 3**՝ Լոնդոնի հիմնադրման մասին պատմական ակնարկ: **Թեմա 4**՝ «Լոնդոնի տեսարժան վայրերը» տեքստը՝ բաղկացած 4 մասից: **Թեմա 5**՝ Բառակազմական և շարահյուսական վարժություններ քաղաքական հրապարակախոսության հիման վրա: **Թեմա 6**՝ Բրիտանական ավանդույթներն ու սովորությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Յուրաքանչյուր դասաժամի ավարտին՝ գրավոր և բանավոր կերպով:

Ստուգարքը գնահատվում է բանավոր պատասխանի հիման վրա:

18/H01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն)- 2 (0 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անգլերենի կիրառական օգտագործումը:

Դասընթացի շրջանակներում ուսանողները սովորում են անգլերենի քաղաքական բառապաշարը անգլերեն բնագիր թերթերի ու տեքստերի հիման վրա, որը վերջիններիս մոտ զարգացնում է դասական բնագրերի ընթերցանության և վերլուծության ունակությունները: Դասընթացն անց է կացվում “Politics and international relations” գրքի միջոցով՝ զուգահեռ անգլերեն թերթերի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կհմանա անգլերեն քաղաքական բառապաշարը պրակտիկայում կիրառելու հմտությունները:

Բովանդակությունը

Թեմա 1՝ Ամերիկյան կառավարությունն ու մասսայական դժգոհությունը: *Թեմա 2*՝ Քաղաքական հրապարակախոսության բառապաշարը, վարժություններ քաղաքական տեքստերի հիման վրա: *Թեմա 3*՝ Միջազգային հարաբերությունների թեորիան: *Թեմա 4*՝ Նոր ուղղություններ ամերիկյան քաղաքականության մեջ (մաս 1-ին): *Թեմա 5*՝ Բառակազմական և շարահյուսական վարժություններ քաղաքական հրապարակախոսության հիման վրա: *Թեմա 6*՝ Նոր ուղղություններ ամերիկյան քաղաքականության մեջ (մաս 2-րդ):

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Յուրաքանչյուր դասաժամի ավարտին՝ գրավոր և բանավոր կերպով:

Ստուգարքը գնահատվում է բանավոր պատասխանի հիման վրա:

Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

15/H01. Արժութային համակարգեր և հարաբերություններ (5 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ, 1- ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է մագիստրանտներին ծանոթացնել արժութային համակարգերի ձևավորման և արժութային հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

- 1. **կհմանա** ազգային, միջազգային և տարածաշրջանային արժութային համակարգերի ձևավորման սկզբունքների մասին
- 2. **կտիրապետի** արժութային հարաբերությունների առաջացման և արժույթների փոխարժեքների սահմանման կարգին
- 3. **կհասկանա** միջազգային արժութային շուկայի գործունեության մեխանիզմները
- 4. **կծանոթանա** արժութային քաղաքականության, արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Փողի շուկան: Փողի պահանջարկն ու առաջարկը: Հավասարակշռությունը փողի շուկայում: *Թեմա 2*՝ Արժութային համակարգերի ձևավորումը և զարգացումը: *Թեմա 3*՝ Միջազգային արժութային համակարգի ձևավորման փուլերը: *Թեմա 4*՝ Արժութային հարաբերություններ և արժութային փոխարժեքներ: *Թեմա 5*՝ Արժույթի փոխարժեքների վրա ազդող գործոնները: *Թեմա 6*՝ Միջազգային արժութային շուկա: *Թեմա 7*՝ Արժութային քաղաքականությունը, արժութային փոխարժեքի կարգավորումն ու վերահսկողությունը: *Թեմա 8*՝ Արժութային քաղաքականությունը և արժութային կարգավորումը ՀՀ- ում: *Թեմա 9*՝ Միջազգային արժութային կազմակերպությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

15/H02 . Էկոնոմետրիկա (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ունկնդիրների մոտ զարգացնել հմտություններ տնտեսագիտական հետազոտություններում էկոնոմետրիկայի հիմնական հասկացությունների, մոդելների և մեթոդների կիրառման գործընթացում: Պատրաստել մասնագետներ, որոնք կարողանան էկոնոմետրիկական մոդելավորման հիմնական սկզբունքները կիրառել ֆինանսական գործընթացում, այսինքն՝ կարողանան կատարել հանգամանալից, բովանդակալից և բազմակողմանի տնտեսագիտական վերլուծություններ և կանխատեսումներ՝ գործնական աշխատանքում կշռադատված որոշումներ կայացնելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ուսումնասիրության արդյունքում մագիստրանտը.

1.կիմանա տնտեսագիտական հաշվարկներում և հետազոտություններում օգտագործվող էկոնոմետրիկական մեթոդների և մոդելների հիմնական սկզբունքները, հասկացությունները, սահմանումները և օգտագործման եղանակները.

2.կկարողանա կիրառել էկոնոմետրիկայի կարևորագույն հասկացություններն ու մեթոդները ֆինանսական գործընթացում օրինաչափությունների քանակական արտահայտությունների ստացման համար..

3.կտիրապետի հիմնական էկոնոմետրիկական մեթոդներին՝ կոնկրետ գործնական խնդիրների էկոնոմետրիկական վերլուծության և դրանց լուծման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ էկոնոմետրիկայի հիմունքները: *Թեմա 2՝* Երկակի ռեգրեսիայի գծային մոդելը: *Թեմա 3՝* Բազմակի ռեգրեսիայի դասական գծային մոդելը : *Թեմա 4՝* Բազմակի ռեգրեսիայի ընդհանրացված գծային մոդելը: *Թեմա 5՝* Ռեգրեսիայի ոչ գծային մոդելներ և դրանց գծայնացումը: *Թեմա 6՝* Գծային միաժամանակյա հավասարումների համակարգեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված երկու ընթացիկ քննություններն անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման (բանավոր քննարկումից հետո) հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուհնը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

15/H04. Միջազգային ֆինանսներ (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնական գործունեության ընթացքում ուսանողներին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել միջազգային ֆինանսներ առարկայի նպատակների, խնդիրների, սկզբունքների, ուղղությունների գործառնությունների, ձևերի, մեթոդների մասին: Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.կիմանա

միջազգային ֆինանսներ առարկայի էությունը, սկզբունքները, հիմնական խնդիրները, միջազգային ֆինանսների առանձնահատկությունները, դերը արժույթային շուկաների կարգավորման գործում, համաշխարհային ֆինանսական ռեսուրսների կառուցվածքը, դրանց սուբյեկտները, համաշխարհային չափանիշների սեզմենտը ըստ ֆինանսական ակտիվների շրջանառության արժույթի համաշխարհային շուկան որպես ՀՖՇ-ների կարևորագույն մաս, արժույթային կուրսերի տեսակները, ազգային արժույթին կապվածությունը:

2.կհասկանա

կապիտալի շարժի հետ կապված արժույթային գործառնությունները, արժույթային կարգավորման և հսկողության մարմինները, դրանց գործակալների գործունեության անհրաժեշտությունը, միջազգային շուկաների դերը արժույթային միջազգային համակարգի կարգավորման գործում, Եվրոշուկայի դերը և Եվրոդոլար հասկացությունը, աշխարհի պաշտոնական ոսկու արժույթային պահուստների կառուցվածքը:

3.կկարողանա

վերլուծել արժույթային միջազգային հիմնադրամի ցուցանիշները և գնահատել դրանց վրա ազդող գործոնները, նախագծել արժույթային միջազգային հիմնադրամում ազատ արժույթային կուրսերի գնահատումը և դրանց վրա ազդող գործոնները, բնութագրել արժույթային միջազգային հիմնադրամի կազմակերպչական կառուցվածքը և անդամակցության կարգը,

գնահատել արժույթի համաշխարհային շուկայում արժույթային արժեքները,
գնահատել բանկային վարկերի համաշխարհային շուկան որպես կապիտալի շուկայի երկրորդ սեգմենտ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Միջազգային ֆինանսական համակարգ: **Թեմա 2**՝ Համաշխարհային ֆինանսական ռեսուրսների կառուցվածքը, դրանց հիմնական սկզբունքները: **Թեմա 3**՝ Համաշխարհային միջազգային հիմնադրամի չափանիշների սեգմենտը ըստ ֆինանսական ակտիվների շրջանառության, **Թեմա 4**՝ Համաշխարհային ֆինանսական շուկա: **Թեմա 5**՝ Համաշխարհային արժույթի շուկաներ: **Թեմա 6**՝ Համաշխարհային շուկաների առանձնահատկությունները: **Թեմա 7**՝ Աշխարհի պաշտոնական ոսկու արժույթային պահուստները: **Թեմա 8**՝ Համաշխարհային վարկային շուկա: **Թեմա 9**՝ Համաշխարհային բանկային շուկաները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

15/H05. Արժեթղթերի շուկա և բորսային գործ (5 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակը ՀՀ-ում արժեթղթերի շուկայի և դրա մասնակիցների գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ ամբողջական պատկերին ծանոթացնելն է՝ առկա հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների քննարկմամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1.կիմանա արժեթղթերի շուկայի տնտեսական և իրավական բովանդակությունը՝ պատկերացում կազմելով ՀՀ-ում արժեթղթերի շուկայի մասնակիցների և ենթակառուցվածքի, շրջանառվող արժեթղթերի, ինչպես նաև կարգավորման և վերահսկողության մասին.

2.կկարողանա արժեթղթերի շուկայի վերաբերյալ ստացված տեսագործնական բնույթի գիտելիքները օգտագործել ապագա իր աշխատանքային գործունեության մեջ.

3.կտիրապետի ՀՀ-ում արժեթղթերի շուկայի գործունեության առանձնահատկություններին և առկա հիմնախնդիրներին:

Բովանդակությունը.

«Արժեթղթերի շուկա և բորսային գործ» դասընթացը կոչված է ուսումնասիրելու ՀՀ արժեթղթերի շուկայի դերն ու նշանակությունը, ՀՀ-ում շրջանառվող արժեթղթերը, ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայությունները և դրանք մատուցող անձանց (ծառայությունների տեսակները և դրանց բովանդակությունը, մատուցման առանձնահատկությունները ՀՀ-ում, անձանց տեսակները, գրանցումը, լիցենզավորումը, գործունեության իրականացումը, տնտեսական նորմատիվները, գործարար վարվելակերպը, հաշվառումը և հարկումը), ՀՀ արժեթղթերի շուկայի ենթակառուցվածքը (առևտրային, հաշվարկային և պահառության համակարգերը), արժեթղթերի շուկայում չարաշահումները, ինչպես նաև ՀՀ-ում արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության համակարգը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է գրավոր, իսկ մյուսը՝ բանավոր, որոնց առավելագույն գնահատականը 4 միավոր է: Քննությունների հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

15/H07. Ֆինանսական վերլուծություն (5 կրեդիտ)

